«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 09/02

ք.Երևան,Արշակունյաց 5.417 սենյակ 24.07.2017թ. ժամը 17:00

Համաձայն 07.07.2017թ. թիվ 10/11758-17 գրությամբ՝ՀՀ Արդարադատության Նախարարությունը վերահսցեյագրված «ՍԳԿԿ» ԻԿԿ-ին՝30.06.2017թ-ին «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի վարչաիրավական և դատական պրակտիկայի բաժնի ղեկավար՝ Արման Մարտիրոսյանից ստացված միջնորդությունը «Կասավան» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝ Արմենակ Էլոյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով, կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու և դիմումում նշված փաստական հանգամանքների քննության համար՝ ս/թ-ի հուլիսի 24-ին ժամը 17.00-ին՝ հրավիրված «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստին.

ԾԱՆՈՒՑՎԱԾ ԷԻՆ՝
Հանձնաժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը
Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը
Հանձնաժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Հանձանաժողովի անդամ՝ Հենրիկ Մարտիկյանը
«Կասավան» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝ Արմենակ Էլոյանը
Դիմումատու՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի վարչաիրավական և դատական պրակտիկայի բաժնի ղեկավար՝ Արման Մարտիրոսյանը:

ՄԱՄՆԱԿՑԵՑԻՆ՝
Հանձնաժողովի Նախագահ՝ Տիգրան Հարությունյանը
Հանձնաժողովի անդամ՝Հարություն Գևորգյանը
Հանձնաժողովի անդամ՝Ռուբեն Խալաթյանը
Հանձանաժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը
«Կասավան» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝ Արմենակ Էլոյանը:
Դիմումատու՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի ներկայացուցիչներ Սուսաննա Վարդանյանը և Զաքար Գրիգորյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝
«Ամերիաբանկ» ՓԲԸ-ի վարչաիրավական և դատական պրակտիկայի բաժնի ղեկավար՝ Արման Մարտիրոսյանի միջնորդության հիմքով, «Կասավան» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ Արմենակ Էլոյանի, գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման, միջնորդությամբ նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու հարցը:

ԼՍԵՑԻՆ՝
Կարգապահական Հանձնաժողովի նախագահ՝ Տիգրան Հարությունյանը ներկայացրեց, «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի վարչաիրավական և դատական պրակտիկայի բաժնի ղեկավար՝ Արման Մարտիրոսյանի միջնորդությունը և կից փաստաթղթերը,նշելով որ միջնորդությունը բանկը ներկայացրել է Անդրանիկ Ելինյանի անվամբ,բայց իրականում «Կասավան» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ է հանդիսանում՝ Արմենակ Էլոյանի առաջարկեց հանձնաժողովի անդամներին քննարկել սնանկության գործով կառավարիչ՝«Կասավան» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝ Արմենակ Էլոյանի նկատմամբ «ԿՀ գործունեության և ՍԳԿ-ի նկատմամբ

կարգապահական վարույթի իրականացման»Կարգի 1.4 կետի հիմքով,կարգապահական վարույթ հարուցելու հարցը:

Հանձնաժողովում նախագահողը հարցը դրեց քվերակության

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝
Կողմ - 4
Դեմ – 0
Ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ՝
07.07.2017թ. թիվ 10/11758-17 գրությամբ՝ՀՀ Արդարադատության Նախարարությունը վերահսկեյագրված «ՍԳԿԿ» ԻԿԿ-ին՝30.06.2017թ-ին «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի վարչաիրավական և դատական պրակտիկայի բաժնի ղեկավար՝ Արման Մարտիրոսյանի 26.06.2017թ-ի միջնորդության հիմքով, «Կասավան» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝ Արմենակ Էլոյանի գործողությունների /անգործության/, դիմումում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ, հարուցել կարգապահական վարույթ:

ԼՍԵՑԻՆ՝
Հանձնաժողովի նախագահ՝Տիգրան Հարությունյանը ներկայացրեց ստացված միջնորդությունը կից փաստաթղթերը և առաջարկեց հանձնաժողովի անդամներին քննարկել միջնորդության մեջ նշված հանգամանքները,սնանկության գործով կառավարիչ՝Արմենակ Էլոյանի որպես «Կասավան» ՍՊԸ-ի սնանկության գործերով կառավարիչ, գործողությունների /անգործության/ փաստական հանգամանքները և սնանկության գործով կառավարչի վարքագծի և նրա գործողությունների օրենքին համապատասխանության,նկատմամբ հայտնել կարծիք:
Հանձնաժողովի անդամ՝ Ռ. Խալաթյանը,առաջարկեց լսել ներկա գտնվող սնանկության գործով կառավարիչ՝Ա.Էլոյանին և նրա ներկայացրած փաստարկները:
Հանձնաժողովի նախագահ՝Տ.Հարությունյանը ձայնը տվեց,սնանկության գործով կառավարիչ՝ Արմենակ Էլոյանին,ով մասնավորապես նշեց,որ «Կասավան»ՍՊԸ-ն սնանկ է ճանաչվել ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի դիմումի հիմքով 29.11.2016թ-ին,Երևան քաղաքի Ավան և Նոր Նորքի ընդհանուր իրավասության դատարանի ԵԱՆԴ/0162/04/16 վճռով,նույն դատարանի 05.12.2016թ-ի որոշմամբ սնանկության գործով կառավարիչ է նշանակվել ինքը,որից հետո ձեռնամուխ է եղել ընկերության գույքի այդ թվում նաև «Ամերիաբանկ»ՓԲԸ-ի հանդեպ պարտավորությունների կատարման ապահովվման միջոց հանդիսացող անշարժ և շարժական գույքի հայտնաբերման և գույքագր - ման աշխատանքներին:Գրավի առարկա անշարժ գույքը գույքագրվել է,բայց շարժական գույքը չէր հայտնաբերվում կառավարչի կողմից,քանի որ պարտապանը ի սկզբանե բացակայել է և առկա չէր ոչ մի պաշտոնատար անձ կամ փաստաթուղթ վկայելու գույքի գտնվելու վայրի մասին: Որոնողական աշխատանքների ընթացքում համագործակցելով պարտատիրոջ հետ մեծի մասիվ և նրա ջանքերով գրավի առարկան հայտնաբերվել է,որի մասին բանկը գրավոր տեղեկացրել է իրեն և իր կողմից 21.06.2017թ-ին նշանակվել է հայտնաբերված 5 անուն գույքի գույքագրում: Նշանակած օրը Երևան քաղաքի Մ.Խորենացի 24 հասցեյի թիվ 3 համարի՝ քաղաքացի Սամվել Ղուկասյանի, տաղավարում կատարվել է գույքագրում և 21.06.2017թ-ին գույքագրվել է 4/չորս/ անվանում գույք,որի վերաբերյալ կազմվել է համապատասխան արձանագրություն «Գույքագրում կատարելու մասին»:Չգույքագրված 1 անվանում սարքավորումը մինչ օրս դեռ չի հայնաբերվել,որի վերաբերյալ կատարվում են որոնողական աշխատանքներ:
Գույքագրված գույքի պահպանություն իրականացնելու համար,գույքը նույն արձանագրությամբ հանձնել եմ ի պահ՝տաղավարի տեր՝Սամվել Ղուկասյանին և պարտավորեցրել՝ պահպանել,չփչացնել,չվնասել և առաջին իսկ պահանջի դեպքում վերադարձնել:
«Ամերիաբանկ» ՓԲԸ-ի ներկայացուցիչ Սուսաննա Վարդանյանը հարց տալու համար ձայն խնդրեց և ստանալով նախագահողի թույլտվությունը հարց ուղղեց ՍԳ կառավարչին առ այն, թե ինչ պատճառով է,որ գույքգրումը կատարվել է նշանակված ժամից հետո,առանց բանկի

ներկայացուցիչների և ինչու այդ գույքը ի պահ չի հանձնվում բանկին,քանի որ իրենք ցանկանում են ի պահ վերցնել գույքը և պահպանությունը իրականացնել իրենց միջոցներով և անվճար:

Սնանկության գործով կառավարիչը պատասխանեց որ նշանակված ժամից շեղումը կատարվել է գույքագրման հնարավորություն ստեղծելու աշխատանքները կատարելու և կողմի կողմից համապատասխան փաստաթղթերի ներկայացման միջնորդության հիմքով,բայց գույքագրումը կատարվել է նույն օրը և սահմանված կարգով:Ինչ վերաբերվում ի պահ հանձնելուն,ապա դա գույքի պահպանության՝կառավարչի օրենքով սահմանված պարտականության իրականացման եղանակ է,որը կառավարիչը իրականացնում է իր որոշմամբ և իր պատասխանատվությամբ, որը չի պահանջում պարտատիրոջ թույլտվություն կամ համաձայնություն և չի կարող քննարկվել պարտատիրոջ կողմից և դառնալ բողոքի պատճառ:Կառավարիչը նշեց նաև որ իր կողմից կատարվել են այն բոլոր գործողությունները,որոնք սահմանված են օրենքով,որպես կառավարչի լիազորություններ և վստահ է որ իր գործողությունները կնպաստեն,սնանկության վարույթի հետագա գործառույթների ժամկետներում և առավելագույնս արդյունքներով կատարելուն:

«Ամերիաբանկ» ՓԲԸ-ի մյուս ներկայացուցիչ Զաքար Գրիգորյանը,ձայն վերցնելով պնդեց իրենց այն կարծիքը,որ իրենք ցանկանում են,որ կառավարիչը գույքը ի պահ հանձնի բանկին,որը կբացառի գույքերի հետագա օգտագործումը,հակառակ դեպքում իրենք կդիմեն այլ համապատասխան մարմիններին,համապատասխան միջոցներ ձեռնարկելու պահանջով,արդեն սանկության գործով կառավարչի դեմ:

Հանձնաժողովի անդամները քննարկեցին հարցը ,մասնավորապես հանձնաժողովի անդամ Հ.Ադամյանը հայտնեց այն կարծիքը,որ ներկայացված միջնորդությունը Բանկը ներկայացրել է՝ Դատարանին,պարտապանի ՍԳ Կառավարչին և ՀՀ Արդարադատության Նախարար՝Դավիթ Հարությունյանին և խնդրել՝«Իրականացնել օրենսդրությամբ սահմանված գործողություններ ***ապօրինի տիրապետողներից*** գույքը հետ պահանջելու ուղղությամբ և դրանց ազատ տեսքով պահպանության ընդունելու կամ հանձնելու և հետագայում աճուրդի և հավանական գնորդներին ներկայացնելու նպատակով»:Նշված հասցեյատերերից ոչ մեկը չունի իրավասություն գույքը ***ապօրինի տիրապետողներից*** հետ պահանջելու,բացի սնանկության գործով կառավարչից,որը այս պարագայում պետք է դեռ պարզի թե տիրապետումը ապօրինի է թե ոչ,իսկ դրա համար պետք է կատարի համապատասխան փոստաթղթային ուսումնասիրություններ,որը պահանջում է առաջին հերթին փաստաթղթերի առկայություն,որը կառավարիչը չի տնօրինում և դա կատարելու համար անհրաժեշտ է ժամանակ:Հանձնաժողովի անդամի կարծիքով ՍԳ կառավարիչի գործողությունները ուղղված են եղել գույքի փաստացի առկայության ֆիքսման,որը հետագայում կտար նրան հնարավորություն փաստաթղթային ապացույցների հայթայթման և գույքի սեփականատիրոջ վերաբերյալ պարզաբանումներ կատարելուց հետո միայն նա կունենար իրավական հնարավորություն տնօրինելու գույքի հետագա ճակատագիրը:Այսինքն կառավարչի գործողությունները ստեղծված իրավիճակում իրավաչափ են և իրենց մեջ չեն պարունակում օրենքի կամ վարքագծի կանոնների խախտումներ ու պետք է,որ բաղոքի առիթ չտային:

Հանձնաժողովի նախագահ՝Տ.Հարությունյանը համաձայնեց արտահայտած կարծիքին և ավելացրեց,որ սնանկության վարույթում պարտապանի գույքի գույքագրման պրակտիկորեն կատարվում է գույքի որոնողական աշխատանքների արդյունքում,որոնք շատ դեպքերում, մասնավորապես նաև այս դեպքում կատարվել են գույքի հայտնաբերումից հետո,որը կատարվել է կառավաչի կամքից անկախ,առանց նրա մեղավորության և այս պարագայում կառավարիչը կատարել է իր պարտականությունների մեջ մտնող բոլոր գործողություններ՝գույքագրում և գույքի ամբողջականության պահպանության կազմակերպում, իսկ ինչ վերաբերվում է գույքը բանկին ի պահ չտալու հանգամանքը բանկի կողմից շահարկելուն, ապա դա կառավաչի կողմից պարտականության իրականացում է,որը կառավարիչը իրականացնում է իր պատասխանատվությամբ և բնական է,որ իր միանձնյա որոշմամբ:

Այսինք ՍԳ կառավարիչ՝Ա.Էլոյանի գործողությունները կատարվել են «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի կարգով և բխել են նույն օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների կատարման անհրաժեշտությունից և հիմնավորված են 29-րդ հոդվածի 1-ին մասի /ե/ կետով իրեն վերապահված լիազորություններով:

Հանձնաժողովի անդամ՝Ռ.Խալաթյանը և Հ.Գևորգյանը նույնպես համաձայնեցին այն մտքին,որ կառավարչի գործողությունները չեն պարունակում օրենքի կամ վարքագծի կանոնների

խախտումներ և կատարվել են «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի կարգով և բխե են նույն օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների կատարման անհրաժեշտությունից և հիմնավորված են 29-րդ հոդվածի 1-ին մասի /ե/ կետով իրեն վերապահված լիազորություններով. իսկ փաստական հանգամանքները ուսումնասիրությունից հետո պարզ է,որ հարուցված կարգապահական վարույթ անհրաժեշտ է կարճել,ՍԳ կառավարիչի մեղքի բացակայության պատճառաբանությամբ:

Հանձնաժողովի նախագահ՝Տ.Հարությունյան առաջարկը դրեց քվեարկության՝

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝

Կողմ - 4

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՝

1. 07.07.2017թ. թիվ 10/11758-17 գրությամբ՝ՀՀ Արդարադատության Նախարարությունը վերահսցեյագրված «ՍԳԿԿ» ԻԿԿ-ին՝30.06.2017թ-ին «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի վարչահիրավական և դատական պրակտիկայի բաժնի ղեկավար՝ Արման Մարտիրոսյանի 26.06.2017թ-ի միջնորդության հիմքով, «Կասսավան» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝ Արմենակ Էլոյանի գործողությունների/անգործության/ նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել,քանի որ կառավարչի գործողությունները չեն պարունակում օրենքի կամ վարքագծի կանոնների խախտումներ և կատարվել են «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի կարգով և բխել են նույն օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների կատարման անհրաժեշտությունից և հիմնավորված են 29-րդ հոդվածի 1-ին մասի /ե/ կետով իրեն վերապահված լիազորություններով ու կարգապահական վարույթի ընթացքում նրա մեղքը ապացուցող փաստերի /ապացույցների/ բացակայության պատճառաբանությամբ:

2.Սույն Եզրակացությունը սահմանված ժամկետում ներկայացնել Դիտորդ Խորհրդին հետագա որոշում կայացնելու նկատառումով:

Հանձնաժողովի Նախագահ՝ Տ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամ՝ Ա.Ադամյան

Հանձնաժողովի անդամ՝ Ռ.Խալաթյան

Հանձնաժողովի անդամ՝ Հ.Գևորգյան